

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ----- 2022թ.

N ----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԼԻՍԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԸ ԳՐԻԳՈՐ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԳՈՒՐԶԱԴՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Լիսինյան փողոցն անվանափոխել ականավոր գիտնական, ֆիզիկոս, գեղանկարիչ Գրիգոր Գուրզադյանի և ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ Սարգիս Գուրզադյանի անվամբ՝ «Գրիգոր և Սարգիս Գուրզադյանների փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԼԻՍԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԸ ԳՐԻԳՈՐ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԳՈՒՐԶԱԴՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ականավոր գիտնական, ֆիզիկոս, գեղանկարիչ Գրիգոր Գուրզադյանը ծնվել է 1922թ. Իրաքի մայրաքաղաք Բաղդադում: Ծնողները 1915 թվականին մազապուրծ են եղել Մեծ եղեռնից:

1944 թվականին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հիդրոտեխնիկական և շինարարական ֆակուլտետը: Նույն տարի ընդունվել է ասպիրանտուրա: 1948 թվականին՝ 26 տարեկան հասակում, Մոսկվայի պետական համալսարանում՝ Վիկտոր Համբարձումյանի ղեկավարությամբ, պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Միջաստղային գազային նյութի ճառագայթային հավասարակշռությունը» թեմայով: Վ. Համբարձումյանի հետ երկար տարիներ աշխատել է Բյուրականի աստղադիտարանում՝ հիմնադրումից ի վեր:

1955 թվականին Լենինգրադի պետական համալսարանում պաշտպանել է դոկտորական թեզ: 1950-1966 թվականներին ղեկավարել է ԲԱ աստղերի և միգամածությունների ֆիզիկայի բաժինը: 1967-1973 թվականներին՝ տիեզերական հետազոտությունների մասնաճյուղը: 1973-1978 թվականներին ղեկավարել է Գառնիի աստղագիտության լաբորատորիան: 1978-1992 թվականներին եղել է ԲԱ արտամթնոլորտային աստղագիտության լաբորատորիայի վարիչ, 1979 թվականից ԵրՊԻ տիեզերական սարքաշինության ամբիոնի վարիչ: 1992-2004 թվականներին՝ Գառնիի տիեզերական աստղագիտության ինստիտուտի տնօրեն:

1962 թվականին Գրիգոր Գուրզադյանն արժանացել է պրոֆեսորի կոչման:

Կենդանության օրոք լեգենդ դարձած Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանակիր Գրիգոր Գուրզադյանի անունը հայտնի է համաշխարհային գիտական շրջանակներին, իսկ նրա տիեզերական գործունեությունն ընդգրկված է միջազգային հանրագիտարաններում:

Գրիգոր Գուրզադյանը հրատարակել է ավելի քան 200 գիտական հոդված և մեկ տասնյակ սովորաձավալ մենագրություններ՝ նվիրված աստղաֆիզիկայի հիմնախնդիրներին:

ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ Սարգիս Գուրզադյանը ծնվել է 1929 թվականին: 1946 թվականին ավարտել է Երևանի Ավետիք Իսահակյանի անվան միջնակարգ դպրոցը: 1946-1951 թվականներին սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետական բաժնում: 1951 թվականին աշխատանքի է ընդունվել «Հայնախագիծ» ինստիտուտում՝ Սամվել Սաֆարյանի արվեստանոց: 1969 թվականից եղել է «Հայպետնախագիծ» ինստիտուտի № 1 ճարտարապետական արվեստանոցի ղեկավարը, 1974-1979 թվականներին՝ ՀՃՄ վարչության քարտուղար, 1994 թվականին նշանակվել է «Հայնախագիծ» ԲԲԸ խորհրդի նախագահ: 2002 թվականին արժանացել է ճարտարապետության միջազգային ակադեմիայի պրոֆեսորի կոչման:

Սարգիս Գուրզադյանի վաստակի ապացույցն են Երևանի խորհրդանիշներ «Կասկադը» և «Վերածննդի համալիրը»:

Սարգիս Գուրզադյանի նախագծերով կառուցվել են մի շարք բնակելի և հասարակական շենքեր և այլն:

Գուրզադյան եղբայրները 1924 թվականից բնակվել են Լիսինյան փողոցում:

Երևան քաղաքի Լիսինյան փողոցը Գրիգոր և Սարգիս Գուրզադյանների անվամբ անվանափոխելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Լիսինյան փողոցի բնակիչների և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Արմեն Սարգսյանի կողմից:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 16-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Լիսինյան փողոցն անվանափոխել Գրիգոր և Սարգիս Գուրզադյանների անվամբ՝ «Գրիգոր և Սարգիս Գուրզադյանների փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԼԻՍԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԸ ԳՐԻԳՈՐ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԳՈՒՐԶԱԴՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Լիսինյան փողոցը Գրիգոր և Սարգիս Գուրզադյանների անվամբ անվանափոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԼԻՍԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԸ ԳՐԻԳՈՐ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԳՈՒՐԶԱԴՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Լիսինյան փողոցը Գրիգոր և Սարգիս Գուրզադյանների անվամբ անվանափոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ